

ՊՐՈՖ. Ն. Ա. ՏՐՈՒՑԿԻ

ՅԵՐԵՔՆՈՒԿ



633
S-99

08570

04 AUG 2010

633

S - 99

ՏՐԵՔԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ

1541

7/5/60

թիւ

10/1/25

ՎԵԼ 13 320 3 / X 79

33

ՊՐՈՖ. Ն. Ա. ՏՐՈՒՅՑԻ

302299

Հ.

ՅԵՐԵՎԱՆԻԿ



1935

ՅԵՐԵՎԱՆԻ

21.03.2014

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Համ. Կ. (բ) կունակցության 17-րդ համագումարում ընկ. Ստալինը բացառիկ խորությամբ տվեց անսամբլահության հետամնացության պատճառների քննադատականը և նշեց նրա վերելքի ուղղիները։ Ընկ. Ստալինի այդ ցուցումների ջնորհիվ 1934 թվին բեկումն մտցվեց հանրապետության վողջ անսամբլական տնտեսության մեջ։ Այժմ մեր խնդիրն եւ ամբապնդել անսամբլահության հետագա եւ ավելի նշանակալից վորակական ու քանակական վերելքը։

Անսամբլահության վերելքն ապահովող միջոցառումների շարքում ամենաազնակարգ տեղերից մեկն ե գրավում կերպ բաղայի ընդարձակման խնդիրը, մասնաւ վորապես կոլտնտեսությունների ու խորհ-

տնտեսությունների գաշտավարության մեջ
բազմամյա լորագգի կերաբույսեր (կործն-
գան, առվույտ և այլն) մտցնելու խնդիրը,

Հայաստանի նման լեռնային մի յերկրի
համար ցանքարաշտերում բազմամյա լո-
րագգի կերաբույսեր մտցնելը և խոտաբույ-
սերի ցանքարչանառություն կիրառելը՝ բա-
ցի այն, վոր ավելացնում ե խորհանտեսու-
թյունների ու կոլտնտեսությունների կերի
ռեսուրսները, զրա հետ միասին լուծում ե
նաև հողի բերրիության վերականգման և
շարունակաբար բարձր բերք ստանալու
խնդիրը:

Հայտնի յե, վոր բազմամյա լորագգի
խոտաբույսերը հողը հարստացնում են ա-
զոտով և բարելավում են նրա կառուցված-
քը: Միևնույն դաշտում այդ խոտաբույսե-
րի 2—3 տարվա ցանքի չնորհիվ մոլախո-
տերն արմատապես վոչնչանում են և ապա-
հովվում ե նրանց հաջորդող կուլտուրայի
բարձր, տնտեսապես եփեկտավոր բերքը:

Սակայն, խիստ կտրված լեռնային ու-

լյեփ ունեցող մի յերկրի համար առանձնա-
պես կարեւոր ե այն, վոր բազմամյա խո-
տաբույսերը հողապահպանության իրենց
ընդունակությամբ յետ չեն մնում անտա-
ռային բուսականությունից:

Բազմամյա խոտաբուսականությունը թեք
լեռնալանջերի հողաշերտը լվացվելուց և
մերկացվելուց պաշտպանելու ամենաձեռնո-
տու և արդյունավետ միջոցներից մեկն է:

«Կուբայի խոպանական պլանտատորնե-
րը հրդեհում ելին լեռնալանջերի անտառ-
ները և այդ հրդեհից առաջացած մոխրից
ստանում պարաբուանյութ, վորը բավա-
կանացնում եր խիստ յեկամտաբեր ուուճի
թփերի միայն մեկ սերնդին. նրանց ինչ
գործն եր, թե այնուհետև տրոպիկական
հեղեղները սրբում ելին հողի վերին ան-
պաշտպան չերտը, իրենց յետել թողնե-
լով մերկացած ժայռերը*):

*.) Փր Թիգոլս - դիալեկտիկա природы, изд. 6-ee,
стр 57.

Ֆր. Ենգելսը կես դար առաջ այսպես երնորոշել կապիտալիստական գիշատիչ հոգագործությունը: Մարդարարության հողերի վարելուն, վոր տեղի ունի մեր վորոշ դյուզերում ու կոլտնտեսություններում, պետք ե վերջ տալ վորովհետեւ այդ ավելի յի մեծացնում անտեսական ոպտագործումից դուրս յեկող հողային տարածությունները, վորոնք կապիտալիստական անտեսավարական հողոգտագործման հետեանքով վեր են ածվել մերկ ժայռերի: Մեր հանրապետության վորոշ լեռնային շրջաններում քիչ չեն այդպիսի տարածությունները: Այդ վարված մարդարարության տարածություններն անհրաժեշտ ե վերականգնել և պիտանի դարձնել ոգտագործման համար՝ բազմամյա խոտացանության միջոցով:

Լեռնային շրջանների մարդարարուները և վարելահողերը հանդիսանում են սոցիալիստական անասնապահության կարելորագույն հիմքը:

Սոցիալիստական հողագործության ձիւտ

դրվածքով մենք պետք ե կանխենք և թույլ չտանք սոցիալիստական արոտների և դաշտերի բերիության անկումը և ել ավելի ընդարձակենք սոցիալիստական անասնապահության կերի ոհսուրաները:

Պրոֆ. Տրոիցկու սույն գրքույկն այս կարևորագույն աշխատանքներում կարող ե մեծ ոգնություն ցույց տալ սոցիալիստական անասնապահության ֆրոնտում աշխատողներին:

Ս. ԽՍԱՀԱԿՅԱՆ

ՅԵՐԵՔՆՈՒԿ

Յերեքնուկի տեսակներից մշակվում են
զլխավորապես յերեքը—կարծիք կամ մար-
դագետնային յերեքնուկ, սպիտակ և շվե-
գական, Բայցի դրանցից, Հայաստանի լեռ-
նային մարդագետիններում բուսնում են
յերեքնուկի շատ վայրի տեսակներ, վորոնք
ներկայումս չեն մշակվում, սակայն հիմ-
նալի կերարույս են և կարող են մշակվել:

ԿԱՐՄԻՐ ՅԵՐԵՔՆՈՒԿ

Կարմիր յերեքնուկը շատ հին կերա-
բույսերից մեկն և 600 տարուց ավելի ե,
վոր Յեկրոպայում հայտնի յե վորպես կուլ-
տուրական բույս: Սկզբում նա տարածված
եր միայն արևմտյան Յեկրոպայում, բայց
18-րդ դարի վերջին սկսեցին ցանել նաև
Ռուսաստանում: Ներկայումս Խորհրդային

Միության հյուսիսային և կենարոնական շրջաններում յերեքնուկն ամենատարածված կերային կուլտուրաներից մեկն եւ Անդր կովկասում յերեքնուկի կուլտուրան քիչ և տարածված: Յերեքնուկի ցանքերը տարածված են զլխավորապիս Վրաստանում, իսկ Հայաստանում մինչև այժմս յերեքնուկի ցանքերը յեղակի գեալքեր են յեղել, այն ել հանրապետության հյուսիսային շրջաններում:

ԲՈՒՅՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կարմիր կամ մարդագետնային յերեքնուկը բազմամյա բռւյս եւ նրա ուղիղ, ուղղաձիգ արմատն այնքան խորը չի գնում հողի մեջ, ինչպես մի քանի ուրիշ կերատիտինը, ինչպես, որինակ, առվույտինը կամ կորնգանինը, համենայն դեպի բարեհաջող պայմաններում, լավ, խոր հողերում կարող է հասնել մինչև $1\frac{1}{2}$ —2 մետրի: Արժող կամ հասնել մինչև $1\frac{1}{2}$ —2 մետրի:

Եռնք աղեղնածե բարձրանում են վեր և հասնում են 50—70 սմ բարձրության: Թէ արմատի մոտ և թէ ցողունների վրա առատորեն զարգանում են բավականին խոշոր տերևներ, վորոնցից յուրաքանչյուրը բաղկացած է յերեք թերթիկից: Ցողունները սովորաբար քիչ են ճյուղավորվում, իսկ նրանց վերի ծայրին լինում են խոշոր զըլիներ (գնղեր), վորոնք բաղկացած են լինում կարմրագագույն բազմաթիվ մանր ծաղիկներից: Ծաղիկները հասունանալուց հետո չեն թափվում, այլ չորանում են ցողունների վրա և գոնզը մուգ գարշնագույն և գառնում, Այդ ժամանակ կաղմագում են պառուղներ, վորոնք հասունանալով թափվում են ամբողջ ծաղկի հետ միասին: Պառուղները մանր են, սովորաբար պարունակում են յերկու, յերբեմն եւ յերեք սերմ: Սերմերը մանր են, կարմրագեղնագույն կամ հաճախ մանիչակագույն նըրերանգով, ձվածե կողքից ցցված քթիկով (այդ բնորոշ ձևերով յերեքնուկի սերմերը

հեշտությամբ տարբերվում են առվույտի սերմերից, վորոնց, առաջին հայացքից, նըւրանք բավականին նուան են):

Մշակվում են կարմիր յերեքնուկի բազմաթիվ տեսակներ, վորոնք բոլորը կարող են բաժանվել յերկու հիմնական տիպի՝ ուշահաս միահունձ և վաղահաս յերկունձ: Կարմիր յերեքնուկի այդ յերկու տիպերը խիստ տարբերվում են իրարից իրենց բերքատվությունը և անման պայմաններով: Վաղահաս յերեքնուկներն ուշահասներից 15—18 որով շուտ են ծաղկում: Նրանք ավելի ցածրահասակ են, ցողունների վրա քիչ տերեններ ունեն, սակայն արմատային տերենները շատ են: Վաղահաս տեսակներն արվելի պահանջնություն են խոնավության նըւկատմամբ և պակաս ձմեռնուզիմացկուն են: Հնձելուց հետո նրանք արագ և ուժեղ վերաճում ու տալիս են յերկորդ հունձը: Սակայն նրանց բերքատվությունը շատ ել մեծ չե, համենայն

դեպք ավելի չե քան ուշահաս միահունձներինը:

Ուշահաս միահունձ տեսակները, հակառակ վաղահասների, զարգանում են գանգաղ և ուշ են ծաղկում: Նրանք ավելի բարձրահասակ են, ցողունների վրա ավելի շատ տերեններ են ունենում, քան արմատների մոտ հնձելուց հետո դանդաղ են վերաճում, ուստի Խուսաստանի պայմաններում սովորաբար չեն հասցնում յերկորդ քաղը տալ Յերեքնուկների ուշահաս տեսակներն ավելի յեն գիմտնում ցրտերին և խոնավության խնդրում ավելի քիչ են պահանջնություն:

Նրանք ավելի բերքատու յեն, քան վաղահաս տեսակները և յերբեմն ուշահաս յերեքնուկը մի հնձով ավելի շատ բերք է տալիս, քան տալիս և վաղահաս յերեքնուկը՝ յերկու հնձով: Սերմ ևս ուշահաս յերեքնուկներն ավելի յեն տալիս, քան վաղահասները:

Դժվար և ճշտորեն վորոշել թե մինչև

այժմ յերեքնուկի ինչպիսի տեսակներ են
մշակվել Անդրկովկասում, վորովհետեւ սո-
վորաբար սերմերն ստացվում են յերեք-
նուկ անվան տակ, առանց տեսակը նշե-
լու: Ըստ յերեսոյթին դրանք գերազան-
ցապես յերկնունձ տեսակներ են, վորովհե-
տեւ ստացվել են զլխավորապես հարավից՝
Խոստովի պահեստից: Ստորև մինք ցույց
կտանք Անդրկովկասի պայմաններում ա-
վելի նպատակահարմար միահունձ տեսակ-
ները և զուցե հենց դրանով պիտի բա-
ցատրել այն յերեսոյթը, վոր մինչեւ վերջին
ժամարակներս Անդրկովկասի հանրապե-
տություններում յերեքնուկի ցանքերը հա-
ճախ անհաջող են յեղել:

ԿԵՐԱՅԻՆ ԱՐԺԱՆԻՔԸ

Եերեքնուկը հիանալի բերքատու և
սննդաբար կերաբույս եւ ժամանակին հըն-
ձելու դեպքում յերեքնուկը տալիս և այն-
պիսի խոտ, վորն իր սննդաբարությամբ
ավելի բարձր և առվույտի խոտից: Նրա


ցողուններն ավելի փափուկ են և տերևներն
այնքան շատ չեն թափում, ինչպես կորըն-
գանինն ու առվույտինը: Նրա թերությունն
այն ե, վոր մի քիչ ավելի փափ և չորա-
նում, քան առվույտը յեթե չորացնելիս
անձրի և գալիս, ավելի շատ և փչանում,
հաճախ չորացնելիս ուեանում ե: Այնու-
ամենայնիվ զգուշ և խնամքով չորացնելու
դեպքում հիանալի խոտ և ստացվում: Նա-
յած աճման պայմաններին և տեսակին
կարմիր յերեքնուկի բերքատվությունը
տատանվում է 2—ից մինչև 6 տոննի սահ-
մաններում մեկ հեկտարից, սակայն հայտ-
նի յին մինչև 10 տոնն բերք տալու դեպ-
քեր: Ցերեքնուկը մաքուը ցանքում մեծ
մասամբ մնում է 2—3 տարի, վորից հետո
նոսաշանում, չքանում ե, բայց հյուսիսային
Ռուսաստանում և Սիբիրում յեղել են դեպ-
քեր, վոր յերեքնուկը մնացել և նույնիսկ
մինչև 10 տարի: Վորպես արոտ յերեքնու-
կը լավ կեր և տալիս, սակայն արածեց-
նելուն վատ և դիմանում, և հաճախ կեն-

դանիների ուժեղ փորուսուցք և առաջաց-
նում: Դրա համար ել յերեքնուկի դաշտերը
պետք ե արածեցնել միայն այն ժամանակ,
յերբ դաշտում արդեն յերեքնուկը փշրվում
ե և վորակի խոտհարք այլնս պիտանի չի:
ՊԱՀԱՆՁՐ ԿՈՒՄԱՅԻ ՑԵՎ ՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Յերեքնուկը լավ ե զիմանում ցրտին և
հասունացած զիմակում չի վախենում սառ-
նամանիքներից: Սակայն նրա յերիտասարդ
ծիթեն անձյուն ձմռան սառնամանիքնե-
րին հնչությամբ կարող են ցրտահարվել
ուստի, յեթե ձմեռը սակալաճյուն ե, յե-
րեքնուկն աշնանից չպետք ե ցանել: Սաս-
տիկ շոգեթին յերեքնուկը վատ ե զիմա-
նում: Խոնավության նկատմամբ յերեքնու-
կը ըափականին պահանջկոտ ե: Նա բավա-
կանին քանակությամբ խոնավություն ե
պահանջում և չի կարող հաջող աճել չոր-
կիմայում, տեղումների այնպիսի քանա-
կության դիպքում, յերբ առվույտը կարող
է լավ աճել Սովորաբար յերեքնուկն ար-

հետական վոռագում չի սիրում և այդպիսի
դեպքերում խիստ վարակվում ե պարագի-
տային սննիկորով: Բացի այդ, ջրելու ղեպ-
քում յերեքնուկի ըերթի ավելացումն այն-
քան ել կայուն չի լինում, ինչպես առվույ-
տինը, ուստի և յերեքնուկի ջրելու տնտե-
սապես ձևանուու չե: Այդ պատճառներով
յերեքնուկի կուլառուբան հայաստանում կա-
րող ե զբաղեցնել միայն բավականին սահ-
մանափակ տեղ, համեմատած առվույտի և
կորնգանի հետ:

Հողի նկատմամբ ել յերեքնուկը բավա-
կանին պահանջկոտ ե և լավ աճում ե
միայն բուսահողով հարուստ հողերում: Նրա
բերքը խիստ տակաս ե լինում չոր և խճու-
հողերում: Յերեքնուկը հողի չափազանց
խոնավություն չի սիրում և ճահճացած
աեղերուծ արագորեն վոչնչանում ե: Յերեք-
նուկի վրա լավ ե ազդում հողի մեջ վորոշ
չափով, վոչ չափազանց շատ կիր մինելու
նա բոլոր հողերում հողանիք նույնիսկ թույլ
աղայի հողանիք առաջնահանության հողանիք հետևում ե,



վոր Հայաստանում յերեքն կի մշակման համար ամենահարմար հողերն են Հայաստանի ավելի խոնավ — հյուսիսիցին Մըջանների լեռնասեանողային և անտառային հողերը։ Այդպիսի շրջաններն են Ստեփանավանը, Աղբարան, Դիլիջանը, Ալլահ-վերդին և նրանց հարեան անտառային շրջանները։ Յերեքնուկի մշակումը հնարավոր և նաև Ախտայի շրջանի ավելի խոնավ անտառային մասերում։ Այդ շրջաններում յերեքնուկի ցանքերը կարող են հարմարվել միջին լեռնային և բարձր-լեռնային գոտիների կլիմային։ Կարմիր յերեքնուկի մշակման փորձեր են կատարվել Ստեփանավանի շրջանի Լոռու հարթավայրում, վորտեղ յերեքնուկը լավ բերք և տվել։

ՄՇԱԿԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Ինչպես կերախօսերի մեծամասնության, այնպես ել յերեքնուկի համար անհրաժեշտ և խնամքով խոր աշխանավար։ Քանի վոր յերեքնուկը դաշտն յերկար ժամանակ չի

դրագեցնում, սովորաբար 2—3 տարի, առանա միանգամայն կարող ե ցանվել ցանքաշրջանառություններում։ Յերեքնուկի համար լույսաբույսն նախորդներ հանդիսանում են շարքահերկ կուլտուրաները, վորոնք լավ են նախապատրաստում հողը և դաշտն ազատում են մոլախոտերից։ Աշնան հերկած հողը գարնանը խնամքով փոցխվում, կամ ավելի քիչ խորությամբ կրկնահերկ և արշվում։ Յերեքնուկի ցանքն ամենից լավ և կատարել գարնանը, իսկ աշնանը կարելի յի ցանել միայն այն գեպքում, յերբ ձմեռը բավականաչափ ձյունաշատ և լինում։ Յերեքնուկի գարնան ցանքը կարող և կատարվել շատ վաղ, քանի դեռ հողում շատ խոնավություն կա, վորովհետև յերեքնուկի սերմերը և յերիտասարդ ծիւերը շատ խոսնավություն են պահանջում։ Քանի վոր յերեքնուկի սերմերը շատ մանր են, ապա ուրիմ՝ ցանքելիք գաշտի մակերեսը պետք և բավականին հարթ լինի։ Յերեքնուկի

ցանքի համար պահանջվում է միջին թվով
մեկ հեկտարին 20—25 կղ սերմ: Յերեք-
նուկը կարելի յե կատարել շաղացան, ուս-
կայն ավելի լավ և չարքացանով ցանել:
Քանի վոր յերեքնուկի սերմերը շատ մասը
են, ուստի հավասարաչափ ցանելու համար
պետք է խառնել փոքր ինչ խոնավ ավազի
հետ: Յերեքնուկի սերմերը պետք է ծածկել
թեթև փոցիկերով կամ թափալուկներով, այն
ել վոչ խորը: Առաջին տարին յերեքնուկը
սովորաբար հունձ չի տալիս, ուստի սովո-
րաբար ցանում են ծածկող բույսի հետ,
մեծ մասամբ վորեն հացարույսի հետ: Պա-
րաբացնելուց յերեքնուկի բերքը խիստ
բարձրանում է: Կոլիֆոսֆատային պարա-
տացումը շատ բարենապաստ աղդեցություն
և ունենում յերեքնուկի վրա: Հայաստանի
լեռնային սևաճողերում կատարած փորձերը
ցույց են տվել վոր աղոտային պարաբա-
ցումը և գոմաղը նույնպես ուժեղ չափով
բարձրացնում են յերեքնուկի բերքը: Յեթե
հողը բավարար չափով կիր չի պարունա-

կում, մի քիչ կիր կամ գաճ ավելացնելը
լավ է աղդում յերեքնուկի բերքատվության
վրա:

ՅԵՐԵՔՆՈՒԿԻ ԲԵՐՔԱՎԱՐՔԸ

Յերեքնուկը պետք է հնձել ծաղկման
սկզբին Յեթե հունձը քիչ է ուշանում—
մինչև պտուղների թափվելը, այդ այն-
քան ել շատ չի աղդում խոտի վարակի վրա:
Քանի վոր անհրաժեշտ է յերեքնուկը մեծ
խնամքով չորացնել ուստի պետք է հունձն
այնպիսի ժամանակ կատարել յերբ անձրե-
փեց ավելի քիչ վատանգ կա: Յեկ վորովհետեւ
Հայաստանի լեռնային շրջաններում ամբան
առաջին կոսը սովորաբար ավելի անձրե-
փային է լինում, իսկ յերկըորդում ավելի
պարզ,— ապա ցանկալի չե յերեքնուկը շատ
վաղ հնձել Ուստի Հայաստանի համար
յերեքնուկի ուզանաս տեսակներն ավելի լավ
են, քան վաղահաս տեսակները:

Յերեքնուկը հնարավորության չափ
պետք է արագ չորացնել: Անտառային ըլլ-

ջաններում, վորտեղ շատ փայտանյութ կտ
(ձողեր, չոր ճյուղեր և այլն), կարելի յէ
կիրառել թուսաստանում շատ տարածված
փայտյա և կախարաններով», այսինքն ձողե-
րից պատրաստած հենարաններում չորաց-
նելու յիշանակը: Այդպիսի հենարանները
պատրաստվում են իրար կողքի դրած մի
քանի ձողերից, վորոնց վրա կախվում ե
իրուրձը: Այդ ձեռվ յերեքնուկն արագ և
չնրանում, տերեներ քիչ և կորցնում և քիչ
և տուժում անձրեներից:

Սերմացու ստանալու համար յերեքնուկը
պետք ե ցանել ավելի լայն շարքերով՝
30—40 սմ: Ցանքի նորման սերմացվի հա-
մար ավելի քիչ ե, քան կերի համար ցա-
նելու գեպքում—ընդամենը 10—15 կլզ:
Սերմը պետք ե հավաքել այն ժամանակ,
յերբ յերեքնուկի գլխիկները գորչանում են
և հեշտ են կոտրվում: Սերմը հավաքելու
համար յերեքնուկը հնձում և կապում են
խրձիկներով, վորից հետո կալսում են:
Կալսելու ժամանակ պտուղներն առանձնաց-

վում են չորացած ծաղիկների հետ միասին:
Սերմերը մաքրելու համար հարկավոր ե
կամ պատուղները պարկերի մեջ տրորել, կամ
դաշել հատուկ յերեքնուկային քերիչներով:
Տրակտորով աշխատող քերիչները գործում
են արագ և մաքրութ, շատ ավելի քիչ քա-
նակությամբ ջարդված սերմեր են տալիս,
քան ձեռքով մաքրելու դեպքում:

Յերեքնուկի սերմ կարելի յէ հավաքել
վոչ միայն սերմացվի համար մշակած հա-
տուկ ցանքերից, այլի յերեքնուկի այն
սովորական դաշտերից, վորոնք արդեն
սկսել են ծերանալ:

Յերեքնուկի սերմը կարող ե պահպել
2—3 տարի: 3-ից մինչև 6 տարի պահպած
սերմի ծլունակությունը բարձրացնելու հա-
մար ցանելուց առաջ հարկավոր և տրորել
ապահով վարպետի կողմէ կե-
ֆշրած ապահովիվ, վորպետի սերմերի կե-
ղաքականութիւնի վորպետի պահպել
հելուց նա կորցնում ե ջուր ծծելու ընդու-
նակությունը: Սերմը պետք ե այդ ձեռվ

տրորել ցանքից անմիջապես առաջ, վորով-
հետեւ այդ գրությամբ սերմը պահել չի կա-
րելի:

ՅԵՐԵՎԱՆՈՒԿԻ ՎՆԱՍՍԱԽԵՐԵՐԸ

Յերեքնուկը բավական ուժեղ յենթարկ-
ում և զանազան հնասատուների նրա ար-
մատներում յերենն բուն են դնում մի
տեսակ մանր փորդեր—նեմատոդներ, փորոնք
նեխում են առաջ բերում: Այդպիսի դեպ-
քերում այդ տարածության վրա յերեք-
նուկի ցանքը պիտի դադարեցնել 7—9
տարով, մինչև վոր հողի միջի բոլոր պա-
րագիաները վոչնչանան: Յերեքնուկի սեր-
մերն ուստում են յերկարակնշիթ կոչվող
մանր բգեղները: Վերջիններիս դեմ պայ-
քարելու իրական միջոցն ե առաջին հունձն
ավելի վաղ կատարելը, վորի շնորհիվ վե-
րահող յերեքնուկի սերմերն ավելի շոտ
են հասնում: Յերենն դեղերում յերեքնուկի
խոռն ուստում են թրթուռները: Վորտեղ
այդ հաճախ և տեղի ունենում, այնտեղ

հարկավոր և դեղի ներքին շերտերում աղ
ցանել:

Յերեքնուկի յերեքնուկի արմատներում ա-
ռաջանում և յերեքնուկային ուակ կոչված
էիվանդությունը, վորից նրա թփերը թա-
ռամում են: Ռակի դեմ կռվելու համար
պետք և թփերը ֆորմալինի թույլ լուծույ-
թով սրսկել կամ սերմերը ֆորմալինով ախ-
տահանել: Շատ ուշադիր պետք և նետեվել
վոր յերեքնուկի սերմերի մեջ կուսկուտա
կոչվող պարագիտային բույսի սերմեր չի-
նեն, վորովինետեւ այդ բույսը փաթթաթվում
և յերեքնուկի թփերին և նրանից ծծում
սննդարար նյութերը: ԽՍՀՄ-ում գործող
կանոնների համաձայն՝ 1 կլք յերեքնուկի
սերմերի մեջ 10 հատից ավելի կուսկուտայի
սերմ չպետք և լինի, այլապես սերմը կիո-
տանի: Ամենից լավ և թույլ չտար վոր
կուսկուտայով վարակված սերմը ցանվի,
քանի վոր յերեքնուկի սերմը նրանից
գտելը շատ գժվար ե, և միայն հատուկ մե-
քենաներով կարող և կատարվել:

Միւնույն տեղն յերկար ժամանակ յերեքնուկ ցանելուց նրա բերքը խիստ պակասում էր Այս յերենույթը կոչվում է հողի շյերեքնուկահյուծում։ Այդպիսի գեպքերում հարկավոր և տվյալ հողամասում յերեքնուկի ցանքը դադարեցնել ավելի յերկար ժամանակով՝ 6-ից մինչև 10 տարի, վորից հետո այդ յերենույթը վերանում է,

Կարմիր յերեքնուկը թեև Հայաստանում շատ քիչ կարող է տարածվել, սակայն այն շրջանները, վորտեղ նրա մշակությունը հնարավոր է, հենց իսկը հանդիսանում են ամենակարենոր անասնապահական շրջանները։ Ուստի վոչ մի դեպքում չի կարելի ասել, թե յերեքնուկը Հայաստանի համար նշանակություն չունի։ Տեսակների ճիշտ ընտրության գեպքում (զլիսավորապես ուշահաս միահունձ), ճիշտ տեխնիկայով մշակելու դեպքում, Հայաստանի անասնապահական շրջաններում կերի բազա ստեղծելու գործում յերեքնուկը հանդիսանում է ամենակարեվոր կուլտուրաներից միկը։

ՅԵՐԵՔՆՈՒԿԻ ԱՅԼ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նվերական յերենուկը կարմրից տարբեր վում է իր բաց վարդագույն կամ սպիտակ մանրիկ ծաղիկներով և ավելի մանր տերեփիկներով։ Նա նույն կերային նշանակությունն ունի, բնչ կարմիր յերեքնուկը։ Արտօի համար սա պիտանի չե, վորովհետեւ թարմ վիճակում դառն համ ունի, վորը չորացնելու դեպքում, վերանում է։ Շվեդական յերեքնուկը պահանջում է, վոր հողի մեջ շատ խոնավություն լինի և կարող է մշակվել թաց ու ճահճացած տեղերում, վորտեղ կարմիր յերեքնուկի մշակումը հնարավոր չե։

Սպիտակ յերենուկի։ — Մանր բույս է, հողի վրա փափած յերկար ցողուններով և ունի սպիտակ ծաղիկների մանր գլուխներ, վորոնք կանգնած են յերկար վոտների վրա։ Սպիտակ յերեքնուկը խոտհարքների համար պիտանի չե, վորովհետեւ հնձելիս նրա պառկած ցողունները գերանդու ըերանը չեն ընկնում։ Վորպիս արոտային բույս սպի-

տակ յերեքնուկին ունի հիանալի վորակ,
բարձր սննդարարություն, արագ վերա-
ճելու ընդունակություն և լավ ե դիմանում
անառունների վոտքերի տակ տրորվելուն
Սպիտակ յերեքնուկի ծաղիկներից մեղու-
ները հեշտությամբ կարող են վերցնել նը-
րանց մեջ յեղած առատ մեղքը, սինչդեռ
կարմիր յերեքնուկի ծաղիկներն ավելի յեր-
կար խողովակներ ունեն և կարող են մատ-
չելի լինել միայն կովկասյան մեղուների
մի քանի տեսակներին, զրա համար ել
սպիտակ յերեքնուկը ցանքում ե նաև մեղ-
վաբուծական տնաեսություններում վորակն
մեղքատու բույս:

Մեր հիշատակած բոլոր յերեքնուկները
բավական պռատ աճում են Հայաստանի լեռ-
նային մարգագետիններում և նրանց սեր-
մերի հավաքելը խոչոր չափով կարող ե
ոժանդակել կերախոտերի տեղական սերմ-
ֆոնդ ստեղծելու գործին:

Առայժմ չմշակվող յերեքնուկի տեսակ-
ներից պետք ե նշել վարդագույն յերեք-

նուկը, վորը հայաստանի լեռնային մար-
գագետիններում և արոտներում չատ ալիւի
առատ ե բուսնում, քան մյուս տեսակները՝
Տեսքով նա նմանվում է սպիտակ յերեք-
նուկին, սակայն նրա գլխիկներն ավելի
խոչոր են, հասունանալուց հետո սպիտակ
ծաղիկները կարմրում են:

Այդ յերեքնուկի ցազունները չեն փռվում
սպիտակ յերեքնուկի պես, այլ կանգնում
են ուղիղ, ինչպես կարմիր յերեքնուկինը՝
Վարդագույն յերեքնուկը Հայաստանի լեռ-
նային մարգագետինների խոտհարքների
կարեվոր բաղկացուցիչ մասն ե կազմում,
իսկ արոտներում նա հիանալի գիմանում
ե արածեցմանը և տրորվելուն Քիմիական
անալիզները ցույց են տվել, վոր նա չատ
բարձր սննդարարություն ունի:

Այս բոլոր հատկանիւններն ստիպում են
ընդունել վոր չատ ցանկալի յե սկսել
վարդագույն յերեքնուկի մշակությունը,
ուստի չատ ցանկալի յե նաև ամենուրեք

կազմակերպել նրա սելմերի հավաքը՝ տընտեսություններում փոքր փորձնական ցանքեր կատարել, վորպեսզի կարելի լինի ճշգրիտ կերպով ուսումնասիրել նրա բերքատվությունը, աննղաբարությունը և այլ հատկությունները:



Դատ. Խմբագիր՝ Ս. Խանհակյան
Վոճաբան՝ Հ. Հարությունյան

Մբագրիչ՝ Խ. Այվազյան

Գլավետի լիազոր № 9-78

Դրատ. № 201 պատվեր № 183 տիրաժ 3000

Հանձնվել է արտադրության 1935 թ. մարտի 19-ին
Ատորագված է տպագրելու 1935 թ. ապրիլի 2-ին
Գյուղերատի տպարան, Յեղեռն, Նալբանդյան 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0295451

Դիմք 10 կոշ.

18570

189



Проф. Н. А. ТРОИЦКИЙ

К Л Е В Е Р

Сельхозгиз

1935

Эривань